26.11.26 - 26.11.26
16:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ ISTC կենտրոն

Ս.թ. նոյեմբերի 26-ին՝ ժամը 16:00-ին, ԵՊՀ ISTC նորարարական կենտրոնում Սոցիոլոգիայի ֆակուլտետի տարածքային ուսումնասիրությունների և զարգացման լաբորատորիայի նախաձեռնությամբ տեղի կունենա «Հետիոտնային հասանելիությունը և քաղաքային հավասարությունը Երևանում» հետազոտության արդյունքների ներկայացումն ու քննարկումը:

Հետազոտությունը նվիրված է Երևանի Նոր Նորք վարչական շրջանում քաղաքային մատչելիությանը տարբեր խմբերի ներկայացուցիչների համար (հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ, մանկասայլակով ծնողներ)։

Միջոցառման ընթացքում նախատեսվում է պանելային քննարկում, որին կմասնակցեն Երևանի քաղաքապետարանի համապատասխան բաժինների ղեկավարներ, քաղաքային մասնագետներ, ՀԿ-ների ղեկավարներ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am